

Ltin
62

199

ԵՐԱՄԱՄԵՍ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱԶԳԱՆՈՒԻՔ ՀԱՅՈՒՀԵԱՑ

ԷԿԱՐՈՒԹԵԱԾ

1883-1885



ԿԱԼՎԻ

ՆԱԴԵՐՈՒԹՅՈՒՆ Գ. ԿԱՄԱԳՐԻ

(Կամաց)

1885

Երկամեայ Տեղեկագիր

Ա.ԶԳ. ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1883-1885

Դաւառացի Հայ տղմկանց դաստիարակութեան նըպաստելու նպատակաւ կազմեալ Աղքանուէր Հայուհեաց Ընկերութիւնս, երբ երկու տարեշրջան եւս ըստրելով, այսօր է. շրջանի մէջ կը թեւակոխի, հաւատարիմ Ընկերական օրինաց և պարտուց, իւր գործառնութեանց վրայ մի համառօտ տեսութիւն ընելու պէտքն անհրաժեշտ կը համարի:

Ընկերութիւնո՛ առաջադրեալ վսեմնպատակի դորձագրութիւնը գիւղացնելու համար պէտք ունէր ուսումնատենչ ազգայնոց աջակցութեան, եւ այսօր ուրախութեամբ կը խստովանիմք թէ այդ թանկագին օժանդակութիւն չը զլացուեցաւ մեզ, և քաջալերութիւն չը պակսեցաւ մեր ձեռնարկին յաջողութեան և զարգացման համար:

Յայնմ հետէ Աղքանուէր Հայուհիք նոր եռանդեամբ կրկնապատկեցին իւրեանց ջանքեր: Համազուած լինելով թէ առանց նիւթական զօրութեան բարձոյական ոյժն

38. 66

գ 62 - 60

ոչնչ կարող է առնել օր ըստ օրէ աւելցող պիտոյից առնեւ, Ընկերութեան վարչական մարմինը մասնաւոր ուշադրութիւն դարձուց հասոյթից ազբխրն ընդարձակել, բաժանորդաց թիւն ստուարացնելով, յորմէ դոյացեալ հասոյթին վրայ աւելցնելով զանազան քաղաքաց մէջ հաստատեալ մասնաճիւզերու արդիւնքն, դումարն կը լինի թէեւ բաւական գոհացուցիչ, այլ ըստ ինքեան անբաւական վարժարանաց ծախուց :

Արդ իրաց այս վիճակին մէջ, Ընկերութիւնը մերթ ընդ մերթ հասոյթի բացառիկ միջոցներու դիմելու պէտքն զգացած էր, այնպէս որ անցեալ 1884 տարւոյ սկիզբներն ինպաստ Ազգանուեր Հայուհեաց Ընկերութեան, շքեղ պարահանդէս մը կազմակերպեցաւ, ոյր արդիւնքն եղաւ գոհացուցիչ, և այսօր ալ արդէն Ընկերութիւնը ձեռնարկած է ի Պէօյխքուէրէ դաշտային հանդէս մը տալ, որ իւր եղական դիրքով և զուարճութեանց նորօրինակ ծրագրով կը խոստանայ մեծ յաջողութիւն :

Վերջին երկու տարեշրջաններու մէջ Ընկերութիւնս անփոփոխ պահեց իւր վարժարանաց թիւն, առաջային դրամական տաղնապի մառաջքն առնելու համար, միայն թէ երիզայի Քրիստինեան աղջկանց վարժարանի յառաջադիմութեան նպաստելու հոգն ստանձնեց, ըստ որում Երիզայի Դեր. Առաջնորդին, Քաղաքական ժողովոյ և վարժարանի Հոգաբարձութեան կրկնակի թախանձանքներէն զատ, Ընկերութեանս Ողբացեալ Նախադա՞հ՝ Երջանկայիշատակ ներսէս Սրբազն եւս յաւկապէս կը յանձնարարէր մեղ այդ օժանդակութիւնը չը զլանալ Երիզացւոց, որք մեծ յոյսեր կ'ակնկալէին իրենց

իդական սեռով բարւոք դաստիարակութենէն։ Որովհետեւ այսօրինակ մասնակի օժանդակութիւններ ընելու կարեւոր առաջարկն ալ ընդունուած էր մի քանի ամիս յառաջ Ընկերութեան Ընդհանուր ժողովոյ մէջ, հետեւաբար երկար բանակցութիւններէ յետոյ որոշուեցաւ Ընկերութեանս ծախուք ուսուցիչ դաստիարակութիւնի մը զրկել անդ, և այսպէսով թէ Երիզացւոց բաղձանքը գոհացնել և թէ յօժարափայթ կատարել մեր Պատուական Նախադահին հրամանն, որ Կրթական Միութեանս հաստատութեան առաջի օրէն քաջալեր կը հանդիսանայր իւր Ազգանուեր դատերց անձնուեր աշխատութեանց և իւր թանկագին աջակցութիւնը սիրայօժար կը նուիրէր Ընկերութեանս յառաջադիմութեան և զարգացման համար։

Սակայն աւանդ, ճիշդ այս գործողութեանց միջոցին էր որ մահոււան ցուրտ ձեռքն կը հպէր Նորին Բարձր Արբազնութեան վաստակաբեկ մարմնոյն, և այս անզորմ հարաւածով Ազգն կը զրկուէր մի չքնաղ անձնաւորութենէ, մի Պատուական Հօրմէ։

Ընդհանուր Ազգային սուզին մասնակցեցաւ Ազգանուեր Հայուհեաց Ընկերութիւնս, և իւր խորին յարգանաց առհաւատչեայն ձօնեց իւր մեծանուն Նախադահին անմոռանակի շիրմին։

Սակայն Ընկերութեանս Նախադահական Աթոռն թափուր չը մնար այլ ևս, ըստ որում կ. Պոլսոյ նորընտիլ Պատրիարք՝ Ամենապատիւ Յարութիւն Արբազն, ըստ թախանձանաց իւր Ազգանուեր դատերց, կը հաճի իւր Բարձր Նախադահութիւնը շնորհել Ընկերութեանս և օրհնութեան զրտով իրախուսել կըթական խնդրոյն

Համար թափուած այնքան անդուլ անձնուէր ջանքեր:

Դալով Ընկերութեանս Քղիի, Հաճնոյ և Մշոյ վարժարանաց, ուրախ եմք որ Միացեալ Ազգօգուա ընկերութեանց խնամոց շնորհիւ և ընդ հսկողութեամբ Պատուական տեսուչներու, յառաջադիմութեան շաւզին մէջ են, և կը համապատասխանեն մեր բաղձանաց: Առ այս անհուն երախտագիտութեան պարտաւորութիւն մ'ունիմք այն թանկագին օժանդակութեան համար, զոր սիրայօժար կը նուիրեն մեզ կրթական փրկաւէտ ճանապարհին մէջ՝ մեզ ուղեկից Միացեալ ազգաշէն Ընկերութիւնք, ընձեռելով մեզ այն ամէն դիւրութիւններ, զորս երկարաժամանակեայ փորձառութիւնը և դործելու աղատ միջներն միայն կրնան ընծայել:

Իւրաքանչիւր եռամիս մեզ հազորդուած վարժարանաց Տեղեկագիրներն աստիճանական յառաջադիմութիւն մը ցոյց կուտան, և արդէն մէն մի վարժարանի սանուհեաց տարեկան քննութեանց գրաւոր մրցումներն բացարձակապէս կը հաստատեն մեր այս ըսածն:

Քղիի վարժարանն, որ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան քրանաջան վաստակոց նախախայրիքն է, 1884 տարւոյ մէջ ընծայած է ազգին երկու շրջանաւարտ սանուհիք, որք պիտի կրնան բեղմնաւորել իրենց աւանդուած առողջ գաղափարներ և ըստ կարի օգտաւէտ հանդիսանալ իրենց Հայրենեաց:

Հաճնոյ և Մշոյ վարժարաններն ալ նմանապէս լաւ ուղղութիւն մ'ունին և կը խոստանան իրենց կարգին նուիրել շրջանաւարտ սանուհիներ, եթէ ժամանակէն յառաջ այդ նորատի աղջկունքն վարժարանէն հանելու յուի սովորութիւնը խսպառ բարձուի գաւառացի ծնու-

ղաց մէջէն: Աւելորդ չեմք համարիր յայտ առնել թէ մեր գաւառային վարժարանաց մէջ, բաց ի կրօնի, մայրենի լեզուի և այլ կարեւոր գիտութեանց ուսումէն, Պոլսէն ընտրանօք զրկուած գաստիարակուհեաց միջոցաւ մեծ ուշադրութիւն կ'ընծայուի առտնին տնտեսագիտութեան գասերուն և մանաւանդ ձեռարուեստի և կար ու ձեւի ամենակարեւոր ճիւղին, որք իգական սեռի աշխատութեանց մեծագոյն մասը կը կազմեն վարժարանը թողլէ յետոյ:

Ընկերութեանս կողմանէ պատրաստեալ արծաթեայ խաչերով կը վարձատրուին այն աշակերտուհիներ, որոց անուանելն Միացեալ Պատ. Ընկերութեանց կողմանէ կը հազորդուին մեզ իրը ուսումնակը և փութաջան: Այս վարձատրութիւն մեծ օգուտներ կ'արտադրէ, նուազ փութաջաններն յաշխատութիւն զրդուելով, միեւնոյն պատուոյն արժանանալու բաղձանօք:

Երիզայի Քրիստինեան վարժարանն ալ որուն կ'օժանդակէ Ընկերութիւնս վեց ամսէ ի վեր, նոր վարժուհւոյն անդ ժամանելէն ի վեր զգալի քայլ մ'առած է գէպի յառաջադիմութիւն և մեծ յոյսեր կուտայ ապագային համար:

Վերջապէս Ընկերութիւնս՝ նոր տարեշրջանի մէջ գտննելիք նորանոր քաջալերութեանց վստահելով, բանակցութեան մտած է Միացեալ Պատ. Ընկերութեանց հետ, Սղերգու մէջ իգական սեռի նոր վարժարանի մը հաստատութեան նկատմամբ, որուն պէտքն յոյժ զգալի եղած է այդ քրդախօս Հայ ժողովրդեան համար: Բանակցութիւնք յաջող ելք մ'ունեցած են և երկուոտեք համաձայնութիւն գոյացած լինելով, Սղերգու վար-

ժարանի պայմանագիրն կնքուած է արդէն և Միացեալ ազգաշն ընկերութիւնը ձեռնարկած են գործադրութեան :

Կրթական մասին այս համառօտ նկարագիրն ընելէ յետոյ , յառաջ քան զհամարատուութիւն հաշուական գործառնութեանց պարտք կը համարիմք չնորհակալութեամբ յիշատակել Պրուսայի մասնածիւղն , որ 1884 տարւոյն մէջ հաստատուեցաւ վսեմ. Ասպետ եւ Տիկին Ասպետուհի Ա. Զունդի անձնուէր ջանիւք և աջակցութեամբ տեղւոյն ուսումնասէր Տիկնանց եւ Տեարց , մասնաւորաբար Տիկին Զապէլ Կ. Տօնէլեանի :

Ընկերութիւնն անմուանալի երախտագիտութեան պարտաւորութիւն մ'ունի իւր անդամուհիներէն վսեմ : Տիկին Ա. Աղարէկեանի , որ աջակից ունենալով զօրիորդ Պէտրիս Պէնլեան և զկարապետ էֆէնտի Բանթիկեան մասնածիւղ մը հաստատած է յԱղբիանուպոլիս , ուր կը գործեն եռանդուն անձնուիրութեամբ և օրինակելի ուսումնասիրութեամբ , վասն զարգացման և յառաջադիմութեան Ազգանուէր Հայուհեաց ընկերութեանս :

Նոյնպէս խորին երախտագիտութիւն առ Ամենապատի Մերիսեղեկ Սրբազն՝ Առաջնորդն Զմիւռնիոյ և առ Աւետիս էֆէնտի Աւետիկեան , որք անձնուիրաբար կաշխատին յօդուտ ընկերութեանս , Զմիւռնաբնակ Հայոց համակրութիւնն բերելով առ մեզ :

Ոչ նուազ չնորհակալութեան արժանի են Երիշացի ազգայինք , որք ընկերութենէս ընդունած օժանդակութեան փոխարէն , ջանային վերակազմել տեղւոյն լուծեալ Մասնածիւղն , և բաւական արդիւնք մը գոյացնել : Զեմք կարող անցնիլ առանց չնորհակալութիւն յայտ-

նելու առ համայն ուսումնասէր ազգայինս , որք բարոյապէս թէ նիւթապէս կ'աջակցին ընկերութեանս նպատակին իրագործման , և իւրեանց քաջալերութեամբ զօրաւոր մղումն կուտան Ազգային գաստիարակութեան գործոյն :

Հուսկ ապա անկեղծ երախտագիտութիւն տո Պատ . ներկայացուցիչս Հայ Մամլոյն , որք իւրեանց թերթի Էջերն վեհանձաբար կը բանան ընկերութեանս ամէն հրատարակութեանց համար , և իւրեանց քաջալերական յորդորներով աշխատողաց եռանդը գրգռելու և կրկնապատկելու առիթ կը լինին :

Մեր Հայրենի աշխարհին ապագայ մարց գաստիարակութիւնն այնպիսի կենսական խնդիր մ'է , որ այսօր ամէն ոք ճանչցած է նորա կարեւորութիւնը . հետեւաբար Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնս , որ կը ձգափ գէպ յայդ վսեմ նպատակ , իրաւունք ունի յուսարց թէ համակրանաց և քաջալերութեան գեղեցիկ ցոյցերն պիտի կրկնապատկին հետզհետէ , թէ աստի կեդրանն , և թէ ի զանազան քաղաքս Մասնածիւղերու թիւն աւելցնելու և արդէն գտնուածներն զարգացնելու համար , վասնզի գոքա ընկերութեանս յառաջադիմութեան էական տարերքն կը կազմեն :

Սյդ նորանոր համակրութիւններն վայելելով , Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնն պիտի կրնայ աւելի արդիւնապէս աշխատիլ Հայ իգական սեռի գաստիարակութեան , և աւելի իրական արդիւնքներ ձեռք բերել , նուիրելով Հայ ազգին լուսաւոր գաղափարներով մնեալ ազնիւ մայրեր , որք պիտի ճանչնան իւրեանց վսեմ կոչումն և պիտի կրնան պատրաստել բարի քաղաքացիներ , հաւատարիմ Տէրութեան օրինաց և Ազգային պարտուց :

Ա. Տարւոյ համար 150 Օսմ. Պուկի (*)

Բ. » 150 »

Գ. » 170 »

Դ. » 170 »

4. Եթէ յիշեալ գումարէն պակասորդ կամ աւելորդ գոյանայ՝ Միացեալ Ընկերութիւնք պարտին պահասորդն իրենցի, հոգալ եւ իրաւունք ունին աւելորդն իրենց սեպհականել :

5. Վեցամսեայ կանխավճարի պայմանաժամն լրանալէն յետոյ եթէ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնն Միացեալ Ընկերութեանց կողմանէ երիցս ազդարարութիւն ստանալէ յետոյ մինչեւ ամիս մը չվճարէ յաջորդ վեցամսեայն, Միացեալ Ընկերութիւնք վարժարանն փակելու իրաւունքն իրենց կը վերապահեն :

6. Առաջին վեցամսեայ կանխավճարն Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան Կեղր. Գործ. Ժողովոյ կողմէ տեղի պիտի ունենայ պայմանագրին ստորագրութենէն անմիջապէս յետոյ: Իսկ Միացեալ Ընկերութիւնք Թուականէս առ առաւելն երեք ամիս յետոյ պիտի տեղեկագրեն վարժարանին բացումն առ Կեղր. Գործ. Ժողովն Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան կամ իրաւունքն :

7. Միացեալ Ընկերութիւնք պարտաւոր են երեք ամիսն անգամ մը (եթէ անակնկալ դէպքեր չպատահին) վարժարանին կրթական կացութեան վրայ տեղեկագրի մը ներկայացնել Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան Կեղր. Գործ. Ժողովոյ :

(*) Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնս Հաձնոյ վարժարանին համար ալ կը վճարէ Ա. տարւոյ համար 100 Օսմ. ոսկի. Բ. տարւոյ համար 140 Օսմ. ոսկի. Գ. տարւոյ համար 180 Օսմ. ոսկի եւ Դ. տարւոյ համար 250 Օսմ. ոսկի:

Կ. Պոլսոյ Հայոց Միացեալ Ընկերութեանց Տնօրին Ժողովոյ եւ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան Կեդրոնական Գործադիր Ժողովոյ միջեւ հետեւեալ պայմանագրութիւնը կնքուած է:

1. Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնն Միացեալ Ընկերութեանց կը յանձնէ բանալ ի Մուշ(*) աղջկանց վարժարան մը՝ որոյ տեսչութիւնն անկախ կերպով կ'ստանձնեն Միացեալ Ընկերութիւնը :

2. Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան կողմանէ պատրաստուած եւ Միացեալ Ընկերութեանց հաղորդուած կրթական յայտագիրն պիտի զործադրուի սոյն վարժարանին մէջ: Միացեալ Ընկերութիւնք իրաւունք ունին առաջարկել բարեփոխումներ, զորս Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնն կ'ընդունի, եթէ կամենայ:

3. Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնն յիշեալ վարժարանին ծախուց համար պարտի վեցամսեայ կանխիկ հատուցմամբ Միացեալ Ընկերութեանց վճարել:

(*) Այս պայմանագրին իմաստը Համանոյ վարժարանին համար ալ կը վճարէ Ա. տարւոյ համար 100 Օսմ. ոսկի. Բ. տարւոյ համար 140 Օսմ. ոսկի. Գ. տարւոյ համար 180 Օսմ. ոսկի եւ Դ. տարւոյ համար 250 Օսմ. ոսկի:

8. Սոյն պայմանագիրն կնքուած է չորս (4) տարւոյ համար : Պայմանաժամկը լրանալէն երեք ամիս առաջ երկու Ընկերութիւնը պարտաւոր են բանակցութեանց ձեռնարկել, պայմանագրին խզումն, շարունակումն կամ բարեփոխումն վճռելու համար :

Ներկայ պայմանագիրս կրկին պատճենով ի զիր առնուած, երկուստեք ստորագրուած եւ երկու Ընկերութեանց միջեւ փոխանակուած է :

Խ դիմաց Ազգ. Հայ. Ընկ.
Կեդր. Գործ. Ժողովոյ

Ասենադպիր
Ասենապէս

Ա. Գ. ՀԱՐԻՆՅ Տ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ. Մ. ԱՍԼԱՆԵԱՆ

Խ դիմաց Հայոց Միաց. Ընկ.
Տնօրէն Ժողովոյ

Ասենադպիր
Ասենապէս

Մ. ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ. Մ. ԱՍԼԱՆԵԱՆ

Պ Ա Յ Ա Մ Ա Ն Ա Գ Ի Բ

Կ. Պոլսոյ Հայոց Միացեալ Ընկերութեանց Տնօրէն Ժողովոյ եւ Ազգահուէր Հայութեաց Ընկերութեան Կեդրոնական Գործադիր Ժողովոյ միջեւ հետեւեալ պայմանագիրը կենուած է .

1. Ազգանուէր-Հայուհեաց Ընկերութիւնն Միացեալ Ընկերութեանց կը յանձնէ բանալ ի Սղերդ աղջկանց վարժարան մը որոյ տեսչութիւնն անկախ կերպով կ'առանձնեն Միացեալ Ընկերութիւնը :

2. Հայոց Միացեալ Ընկերութիւնը յանձն կ'առնուն նախանական կրթութեան մը համար պահանջուած ուսումներն աւանդել այն վարժարանին մէջ, համաձայն տեղական հանգամանաց :

3. Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնն յիշեալ վարժարանի ծախուց համար պարտի վեցամսեայ կանխիկ հատուցմամբ Միացեալ Ընկերութեանց վճարել տարեկան (120) հարիւր բան Օսմ. ուկոյ զումար մը :

4. Եթէ յիշեալ տարեկան զումարէն պակասորդ կամ աւելորդ զոյանայ, Հայոց Միացեալ Ընկերութիւնը պարտին պակասորդն իրենցմէ հոգալ, և իրաւունք ունին աւելորդն իրենց սեպհականել :

5. Վեցամսեայ պայմանաժամն լրանալէ յետոյ, եթէ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնն Միացեալ Ընկերութեանց կողմանէ երիցս ազդարարութիւն ստանալէ յետոյ մինչեւ ամիս մը ըլ վճարէ յաջորդ վեցամսեայն, Միացեալ Ընկերութիւնը վարժարանը փակելու իրաւունքն իրենց կը վերապահեն :

(*) Սոյն պայմանագրին խմասար Քղիի վարժարանին նորոգեալ քառամեայ պայմանագրին հետ միօրինակ ըլլալուն աւելորդ կը համարիմք առանձին նշանակել :

6. Առաջին վեցամսեայ կանխագնարն Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան Կեղրոնսական Գործադիր Ժողովոյ կողմանէ տեղի պիտի ունենայ Պայմանագրիս ստորագրութեան անմիջապէս յետոյ: Խակ Միացեալ Ընկերութիւնը Թրւականէս առ առաւելն երեք ամիս յետոյ պիտի տեղեկագրեն վարժարանի բացումն առ Կեդր. Գործադիր ժողովն Ազգանուէր-Հայուհեաց Ընկերութեան:

7. Հայոց Միացեալ Ընկերութեանց Տնօրէն Ժողովն պարտաւոր է երեք ամիսն անգամ մը (եթէ անակնկալ դէպքեր չը պատահին) վարժարանին կրթական կացութեան վրայ տեղեկագրիր մը և գարողական տարւոյն վերջը վարժարանին վիճակին վրայ ընդհանուր տեղեկագրիր մը ներկայացնել Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան Կեղրոնսական Գործադիր Ժողովոյ:

8. Մոյն պայմանագիրն կնքուած է (4) չորս տարւոյ համար: Պայմանաժամի լրանալէն երեք ամիս յառաջ Պայմանագիր կողմանը պարտաւոր են բանակցութեանց ձեռնարկել՝ Պայմանագրին խզումն, բարեփոխումն կամ շարունակումը վճռելու համար:

Ներկայ պայմանագիրս երկողունց կողմանց համահամ հաւանութեամբ խմբագրուած եւ ընդունուած լինելով, կրկին պատմենով ի զիր առնուած, երկրուանք ստորագրուած ու փոխանակուած է ի միջի Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան Գործադիր Ժողովոյ և Հայոց Միացեալ Ընկերութեան Տնօրինութեան:

Արարեալ ի Կ. Պոլս, 15/27 Յունիսի (1883) Հազար ութ հարիւր ութսուն եւ հինգ ամի.

Ի Գիմաց Ս.զգ. Հայ. ՌԵԿ.
Կեդր. Գործ. Ժողովոյ

Ա. Տիմադար Ա. Տիմադար
Ա. Տիմադար Ա. Տիմադար
Ս. Գ. ՀԱՅԻՆՑ Տ. ՄԱՐՄԻՈՆԵԱՅՆ

Ի Գիմաց Հայոց Միաց. ՌԵԿ.
Տնօրէն Ժողովոյ
Ա. Տիմադար Ա. Տիմադար
Գ. ԶՈՒՐԱՊ. Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

~~~~~

### Ա. ՏԱՐԻ

1. Հայկաբանութիւն. — Այրուբէն կարգալ գրել եւ հեղել:
2. Կրօնագիտութիւն. — Բերանացի պատմութիւն վարուց Քրիստոսի:
3. Թուաբանութիւն. — Թիւ կարգալ եւ գրել:
4. Առանին Տնեսագիտութիւն. — Բերանացի դասախոսութիւն գասափարակէն:
5. Բարոյագիտութիւն. — Բերանացի դասախոսութիւն գասափարակէն:
6. Գիր. — Պարզ գիր եւ գլխագիր:
7. Չեռազործ. — Կար:
8. Գծագրութիւն. — Վարժութիւն ձեւերու:
9. Մարմնամարզութիւն. — Կրթութիւն մարմնոյ եւ շարժման:
10. Չայնաւոր Երածութիւն. — Վարժութիւն ձայնից

### Բ. ՏԱՐԻ

1. Հայկաբանութիւն. — Ակդրունք քերականութեան աշխարհաբարի եւ վարժութիւն ընթերցանութեան:
2. Կրօնագիտութիւն. — Ա. Գրոց պատմութիւն:
3. Պատմութիւն. — Ազգային պատմութեան դիմաւոր դէպքեր:

4. Թուաբանութիւն. — Թիւ կարդալեւ գրել սկզբունք  
ըրս գործողութեան:
5. Աշխարհագրութիւն. — Յնական եւ տեղական աշ-  
խարհագրութիւն:
6. Առևին Տնտեսագիտութիւն. — Բերանացի դասու-  
թուութիւն դաստիարակէն:
7. Բարոյագիտութիւն. — Բերանացի դասախոսութիւն  
դաստիարակէն:
8. Գիր. — Գրավարժութիւն:
9. Զեռագործ. — Կար եւ այլ ասեղնագործք:
10. Գծագրութիւն. — Վարժութիւն ձեւերու:
11. Մարմնամարզութիւն. — Կրթութիւն մարմնոյ եւ  
շարժմանց:
12. Զայնաւոր Երածութ. — Վարժութիւն ձայնից:

#### Գ. ՏԱՐԻ

1. Հայկաբանութիւն. — Բերականութիւն աշխարհաբար  
լեզուի եւ ընթերցումն աշխարհաբար մատենագրաց:
2. Կրօնագիտութիւն. — Շարունակութիւն Ս. Գրոց  
Պատմութեան եւ Քրիստոնէական վարդապետութիւն:
3. Պատմութիւն. — Հայոց պատմութիւն:
4. Թուաբանութիւն. — Զորս գործողութեան խնդիրներ:
5. Աշխարհագրութիւն. — Յնական եւ տեղական:
6. Առևին Տնտեսութիւն. — Բերանացի դասախոսու-  
թիւն դաստիարակէն:
7. Բարոյագիտութիւն. — Բերանացի դասախոսութիւն  
դաստիարակէն:
8. Գիր. — Գրավարժութիւն:
9. Զեռագործ. — Կար ձեւ ու զանազան ասեղնագործք:
10. Գծագրութիւն. — Վարժութիւն ձեւերու:

11. Մարմնամարզ. — Կրթութիւն մարմնոյ և շարժմանց:
12. Զայնաւոր Երածութիւն. — Վարժութիւն ձայնից:

#### Դ. ՏԱՐԻ

1. Հայկաբ. — Քերականութիւն աշխարհաբար լեզուի:
2. Կրօնագիտութիւն. — Քրիստոնէական վարդապետու-  
թիւն եւ շարունակութիւն Ս. Գրոց Պատմութեան:
3. Ազգ. Պատմութիւն. — Հայոց պատմութիւն:
4. Թուաբանութիւն. — Զորս գործողութեան խառն  
խնդիրներ եւ տասնորդական կոտորակ:
5. Աշխարհագրութիւն. — Հինգ աշխարհներ համառօտ:
6. Առևին Տնտեսութիւն. — Բերանացի դասախոսու-  
թիւն դաստիարակէն:
7. Բարոյագիտութիւն. — Բերանացի դասախոսութիւն  
դաստիարակէն:
8. Գիր. — Գրավարժութիւն:
9. Զեռագործ. — Կար ձեւ եւ զանազան ասեղնագործք:
10. Գծագրութիւն. — Վարժութիւն ձեւերու:
11. Մարմնամարզ. — Կրթութիւն մարմնոյ և շարժմանց:
12. Զայնաւոր Երած. — Վարժութիւն ձայնից:



# ՎԻՃԱԿԱՑՈՅՑ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

## Ա.Չ. ՀԱՅՈՒՀԵԱՅ ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### ՔՆԻՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Հաստաեալ ի 1 Դեկտեմբրի 1880

#### ՊԱՇՕՆԵԱՅՔ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

|        |          |              |   |   |                |
|--------|----------|--------------|---|---|----------------|
| Պարոն  | Անեխս    | Քաջքերունի   | . | . | Տնօրին Դասատու |
| Տիկին  | Յուլիանէ | Փէտիմալինեան | . | . | Ա. Վարժուհի    |
| Օրիորդ | Մարիամ   | Ճէլալեան     | . | . | Բ. Վարժուհի    |
| Պարոն  | Ղազար    | Փէտիմալինեան | . | . | Ա. Դասատու     |
| »      | Յակոբ    | Սիմոնեան     | . | . | Բ.             |
|        |          | Տնիսես       |   |   | »              |

Վարժարանը կը յաճախեն 99 աշակերտուհիք, որք դասերու բաժնուած են հետեւեալ կերպիւ

|                        |      |                   |    |
|------------------------|------|-------------------|----|
| Դաս Գ. (բարձրագոյն)    | .    | թիւ աշակերտուհեաց | 4  |
| » Գ.                   | .    | »                 | 7  |
| » Բ.                   | .    | »                 | 15 |
| » Ա.                   | .    | »                 | 14 |
| Նախապատրաստական Դաս Բ. | .    | »                 | 12 |
| »                      | » Ա. | »                 | 47 |
|                        |      | Գումար            | 99 |

Վարժարանիս սանուհիներէն Օրիորդք իւղաբեր Մշտոյեան եւ Մարգարիտ Հ. Գևորգեան, որք վարժարանին հաստատութեան օրէն ի վեր կը յաճախիին անդ եւ իւրեանց ուսումնակրութեամբ եւ փութաջանութեամբ արժանացած էին գովեստից եւ արծաթեայ խաչերու վարձատրութեան, անցեալ 1884 տարւոյ ամապերջի հարցաքննութիւններն փայլուն

— 49 —

Կերպով անցուցած են ի ներկայութեան բազմաթիւ քննչաց եւ չըլանաւարտի վկայական ստացած են:

Մոյն քղիի վարժարանի ուրիշ երկու յառաջադէմ աշակերտուհիք եւս արծաթեայ խաչերով վարձատրուած են:

### ՀԱՃՆՈՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Հաստաեալ ի 23 Մայիս 1881

#### ՊԱՇՕՆԵԱՅՔ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

|        |         |              |   |   |                |
|--------|---------|--------------|---|---|----------------|
| Պարոն  | Մելիքոն | Մանուկեսոն   | . | . | Տնօրին Դասատու |
| Օրիորդ | Ազնիւ   | Երէցեան      | . | . | Ա. Վարժուհի    |
| »      | Մարիամ  | Մախեան       | . | . | Բ.             |
| »      | Արծար   | Տէր Յակոբեան | . | . | Գ.             |
|        |         | Տնիսեսուհի   |   |   | »              |

Վարժարանը կը յաճախեն 71 աշակերտուհիք, որք հետեւեալ կերպիւ դասերու բաժնուած են.

|                        |      |                   |    |
|------------------------|------|-------------------|----|
| Դաս Գ. (բարձրագոյն)    | .    | թիւ աշակերտուհեաց | 6  |
| » Բ.                   | .    | »                 | 7  |
| » Ա.                   | .    | »                 | 5  |
| Նախապատրաստական Դաս Գ. | .    | »                 | 15 |
| »                      | » Բ. | »                 | 11 |
| »                      | » Ա. | »                 | 29 |
|                        |      | Գումար            | 71 |

Վարժարանիս հինգ փութաջան աշակերտուհիք արծաթեայ խաչերով վարձատրուած են, թէ բարուց եւ թէ ուսմանց դասերու մէջ ցոյց տուած յարատեւ աշխատակրութեան համար:

**ՄՇՈՅ ՎԱՐԺԱՐԱՆ**  
Հաստատեալ ի 16 Նոյեմբեր 1883

ՊԱՇՏՈՆԵԱՅՔ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

|        |         |            |                   |
|--------|---------|------------|-------------------|
| Օրիորդ | Ակիլինէ | Համամենեան | Վարժուհի          |
| Պարոն  | Մարզար  | Շաւարչ     | Ա. դաստու         |
| »      | Ցակոր   | Գաբրիէլեան | Բ. »              |
| »      | Կարապէս | Մալխատեան  | Գ. »              |
| »      | Աւետիս  | Մազկերունի | Դ. դաստու և հսկող |
|        | Տեսես   |            |                   |

Վարժարանը կը յաճախեն 81 տշակերտուհիք հետեւեալ բաժանմանիր:

|                     |                   |    |
|---------------------|-------------------|----|
| Դաս Գ. (բարձրագոյն) | Թիւ աշակերտուհիաց | 12 |
| » Բ.                | »                 | 18 |
| » Ա.                | »                 | 21 |
| Նախապատրաստական     | »                 | 50 |
|                     | Գումար            | 81 |

Հինգ յառաջադէմ աշակերտուհիք նախորդ տարւոյ մէջ ցոյց տուած վութաջանութեան փոխարէն արժանացած են արծաթեայ խաչերով վարձատրուելու:

**ԵՐԻՉԱՅԻ ՔՐԻՍՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**

Օ Ժ Ա Ն Գ Ա Կ Ե Ա Լ

ՅՈԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻ

Ի 4 Նոյեմբեր 1884

ՊԱՇՏՈՆԵԱՅՔ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

|               |            |                  |
|---------------|------------|------------------|
| Տիկին Եպրուհի | Նազարեան   | Դասախոս վարժուհի |
| » Մարիամ      | Ամառունեան | Բնելյարանի »     |
| Պարոն Ա.      | Ահարօնեան  | Դասախոս          |
| » Կ.          | Մարտինեան  | Օգնական դասախոս  |

Քրիստինեան օրիորդաց վարժարանի աշակերտուհեաց թիւն է ամբողջ 163, որք հետեւեալ կերպիս դասերու բաժնուած են.

|                 |    |   |   |   |        |              |
|-----------------|----|---|---|---|--------|--------------|
| Դաս             | Ե. | . | . | . | 7      | աշակերտուհիք |
| »               | Դ. | . | . | . | 9      | »            |
| »               | Գ. | . | . | . | 11     | »            |
| »               | Բ. | . | . | . | 12     | »            |
| »               | Ա. | . | . | . | 42     | »            |
| Նախապատրաստական |    |   |   |   | 82     | »            |
|                 |    |   |   |   | Գումար | 163          |

Վարժարանիս ուսմանց ծրագիրն գրեթէ նոյնն է Քղիի, Հաճնոյ և Մշյ վարժարանաց համար պատրաստեալ ծրագրոյն, որ կէտ առ կէտ կը գործադրուի Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան ամէն վարժարանաց մէջ:



ՀԵՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

# Ազգանուշը Հայուհեաց

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ՆՊԱՏԱԿ

Հայաբնակ զաւառաց եւ Կիլիկիոյ մէջ Հայ իգական  
սեռի դաստիարակութեան նպաստել

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Ընկերութեանս կրնայ անդամակցիւ ամեն  
հայ երկու սեռէ, մի բաժնեգնոյ համար ամիսը վճա-  
րելով մի արծաթ դահեկան:

Յօդ. 2. Ընկերութեանս պատույ անդամ կրնան լի-  
նիւնոքա որք կը վճարեն ամիսն գէթ 50 բաժին:

Յօդ. 3. Ընկերութեանս բարերար կ'արձանագրուին  
նոքա որք գէթ 100 ոսկի կը նուիրեն կամ կը կտուկեն:

Յօդ. 4. Ընկերութիւնս ծիւղ կամ ներկայացու ցիչներ  
կրնայ ունենալ ուր որ հարկ տեսնէ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 5. Ընկերութիւնս պաշտօնական երկու մարմին  
ունի Ընդհանուր ժողով, Գործադիր ժողով:

ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 6. Ընդհանուր ժողովը կը ներկայէ զԲնկերութիւնն, ոյր օրէնսդիր և Համարառու մարմինն է:

Յօդ. 7. Ընդհանուր ժողովը կը բաղկանայ 68 երեսփոխանուր հիներէ:

Յօդ. 8. Ընդհանուր ժողովոյ անդամոց  $\frac{1}{4}$ ը երկու տարին մի անդամ՝ վիճակաւ կը դադարի, բայց վերընտրելի է: Դադարելոց աեղ ընտրութիւնք կը լինին Ընդհանուր ժողովոյ կողմանէ ներկայացուած եռապատիկ սրբագրելի ցանկի մի մէջէն:

Յօդ. 9. Ընդհանուր ժողովն երեք ամիսն մի անդամ նիստ կ'ընէ, բայց կրնայ ի պահանջել հարկին՝ արտաքոյ կարգի նիստ գումարել, եթէ Գործ. ժողովն կամ 10 երեսփոխանուրիք դրաւոր առաջարկութիւն ընեն:

Յօդ. 10. Ամեն ընկերուհի կրնայ Ընդհ. ժողովոյ նիստերուն ներկայ դանուիլ իրք ունկնդիր, առանց ժողովոյ մէջ ձայն կամ քուէ ունենալու:

Յօդ. 11. Ընդհանուր ժողովը կրնայ հրաժարեցնել այն երեսփոխանուր հիներն որք ընկերութեանս շահուց և օրինաց հակառակ դորձելու դրից մէջ կը դանուին:

Յօդ. 12. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ իւր Մայր Դիւանը բաղկացեալ մի Ատենապետ և մի Դեր-Ատենապետ մի Ատենադպիր և մի Դեր-Ատենադպիրէ, որոց պաշտօնն երկամեայ է և որք վերընտրելի կրնան ըլլալ:

Յօդ. 13. Պաշտօն վարող երեսփոխանուրիք ուրիշ պաշտօնի չեն կրնար կոչուիլ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 14. Գործադիր ժողովն ընկերութեան ընթացիկ

դործերը կարգադրող և Ընդհ. ժողովոյ որոշումներն դործադրող մարմինն է:

Յօդ. 15. Գործադիր ժողովը կ'ընտրուի Ընդհ. ժողովոյ երեսփոխանուր հեաց մէջէն և կը բաղկանայ 8 անդամներէ, մի Ատենապետ և Դեր-Ատենապետ, մի Ատենադպիր և Դեր-Ատենադպիր, մի Գանձապետ, մի Համարակալ և երկու Խորհրդական:

Յօդ. 16. Գործադիր ժողովոյ պաշտօնն երկամեայ է և անդամք վերընտրելի կրնան ըլլալ:

Յօդ. 17. Գործադիր ժողովը կը ներկայէ իւր հաշուեցոյցն և յաջորդ եռամսնեայ ելմտացոյցն Ընդհ. ժողովոյ, նաև տարեգլխոյ իւր դործառնութեանց համարատութեան տեղեկադիրը:

Յօդ. 18. Վարժարանաց յայտագիրը կը պատրաստէ, Ընդհ. ժողովոյ կը ներկայէ և յետոյ Ազգ. Կեդրոնական վարչութեան կրթական Տեսչութենէն վաւերացնել կուտայ:

Յօդ. 19. Գործադիր ժողովն ստիպողական պարագայից մէջ պատասխանատուութիւնն կրնայ իւր վրաց առնելով աղատաօրէն դործել Ընդհ. ժողովոյ յառաջիկայ նստին մէջ դրաւոր բացատրութիւն տալու պայմանաւ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 20. Ընկերութիւնս թէ ընկերուհիներէ և թէ այլ աղջայիններէ ամեն տեսակ նուէր կրնայ ընդունիլ նուիրատուաց անուանքն եռամիսն մի անդամ կը հրատարակուին յԱզգային լրադիրս:

Յօդ. 21. Ընկերութիւնը ինքն ուղղակի կամ ազգային կրթական ընկերութեան մի միջոցաւ պիտի հաստատէ

իւր դպրոցները Հայաբնակ դաւառաց և Կիլիկիոյ մէջ, և եթէ հարկ տեսնէ՝ անդ դանուած դպրոցներուն պիտի օժանդակէ մասնաւոր պայմաններով։

Յօդ. 22. Ամէն տարեկան չըջանի մէջ լնդհ. Ժողովը օ անդամներէ (արական սեռէ) Յանձնաժողով մի կընտրէ Գործադիր Ժողովը հաշիւներն ու անտու կին վիճակն, ինչպէս նաեւ ելեւմտացոյցն ճշդիւ գործադրուած լինելը քննելու համար։

ԳԱՆՉԱՑԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 23. Գործ. Ժողովը ընկերութեանո դրամն ապահով տանց մէջ պարտի զետեղելի շահեցումն։

Յօդ. 24. Երբ դանձապետն 10 սոկիէ աւելի դրամ ունենայ քողով պարտաւոր է զայն յանձնել դրամապահին։

Յօդ. 25. Ընկերութիւնս և կտորէ բաղկացեալ մի կնիք ունենալով՝ 2 մասն լնդհ. Ժողովը Ա.տենապետին՝ 1 ը գործադիր Ժողովը Ա.տենապետին՝ եւ միւսն Գանձապետին քով պէտք է մնայ և դրամապահէն առնուելիք դրամոց մասին այս և կտորներու միացումն կարեւոր է։

Յօդ. 26. Ընկերութիւնս այժմեան ունեցած դրամադըլիսէն 500 սոկին պահեստի մնալէն զատ մնացեալ դրամէն  $\frac{1}{2}$  20 ալ պահեստի կը մնայ առ ի շահեցումն, իսկ միւսն Ընկերութեան նպատակին կը գործածուի։

ՆԵՐՁԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 27. Ընկերութիւնս ներքին կանոնագիր մի պէտք է անենայ զոր Գործ Ժողովը կը խմբագրէ, և յորում պէտք է գծուած լինին բոլոր տրամադրութիւններն

որք վերաբերութիւն ունին յիշեալ յօդուածներուն գործադրութեան եղանակին, և որք Հիմնական կանոնագրին պէս անհրաժեշտ գործադրութեան պէտք ունին։

ՎԵՐԱԲԵՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒՌՈՒՄՆ

Յօդ. 28. Եթէ որ եւ իցէ անակնկալ պատճառաւ Ընկերութիւնս շարունակելու անկարելիութեան մէջ դանուի՝ այն ատեն նորա դրամն ու գոյքն Աղդ. Կեդր. Վարչութեան կրթական տեսչութեան կողմանէ իգական սեռի դաստիարակութեան կը յատկանայ։

Յօդ. 29. Ընկերութեանս նպատակին անփոփոխ պահելով այն կանոնագիրն 2 տարի վերջ կրնայ վերաքննուիլ, եթէ հարկ տեսնուի։

Ա.Ա.Ե.Ր.Ա.Ջ.Ե.Վ. Ի ԿԵՐՊԱԿԱՆ ՏԵԽՈՆԵՐԵՆ

Ա.զ. Կ.Ե.Դ.Ր. Վ.Ա.Ր.Հ.Ն.Ե.Ր.Ե.Ա.Ն.



# ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

## Ազգանուէր Հայուհեաց

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՆԵՍԱԼ. Ի 11 ՏԾԻՆԻՄԻ 1881

Յօդ. 1. Ընդհանուր ժողովը տարին հինգ օրինաւոր նիստ կընէ, Մայիս, Յուլիս, Հոկտեմբեր, Յունվար եւ Ապրիլ ամսոց վերջը։

Յօդ. 2. Ժողովոյ հրաւիրագրերը պէտք՝ է օրինական նստերէն 5 օր՝ իսկ արտաքոյ կարգի նստերէն 2 օր յառաջ ուղարկուին։

Յօդ. 3. Ատեանը բացուելու համար եթէ որոշեալ ժամուն մեծամասութիւնը չը գոյանայ 1/4, ժամ կընայ գաղտար տրուիլ զիս անէն։

Յօդ. 4. Ատեանը բացուելուն նախ կը վաւերացուի ատենագրութիւնը, կը կարդացուին թղթակցութիւնը եւ ապա կ'անցնուի օրակարգին։

Յօդ. 5. Անձնիւր անդամ ժողովէն ներս մտած ատեն ներկայութեան տետրին մէջ կ'ստորագրէ։

ՊԱՇՏՈՆ ԴԻՒԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Յօդ. 6. Ընդհանուր ժողովոյ գիւանն ունի ժողովոյ

Ատենագրութեանց արձանագիր մի եւ ընկերուհեաց ներկայութեան և բացակայութեան ու բոլոր թղթակցութեանց եւ նամակաց արձանագրութեանց տետր մի։

Յօդ. 7. Ատենագրետն պաշտօն ունի բանալ եւ փակել զԱ.տեանը, վիճաբանութիւններն ուղղել, ատենաբանից կարգաւ խօսք տալ, կանոնագրին պահպանութեանը և ժողովին բարեկարգութեանը հսկել։

Յօդ. 8. Ատենագրետին բացակայութեան ատեն Դեր ատենագրետը նորա տեղ պաշտօն կը վարէ, իսկ եթէ երկուքն ներկայ չդանուին, Առօրեայ ատենագրետ մի կ'ընտրաի։

Յօդ. 9. Ատենագրետը պաշտօն ունի հրաւիրերն ու ժողովայն կողմանէ պէտք եղած բոլոր գրութիւնները պատրաստել, նիստերու արձանագրութիւններն ամփոփել ճշգրիտ ու համառօտ խմբագրել զանոնք և ներկայութեան տետրակին կանոնաւորութեան հսկել նաև ժողովոյն բոլոր նամակներն ընդօրինակել յատուկ տետրի մի մէջ։

Յօդ. 10. Դեր-Ատենագրետին պաշտօնն է Ատենագրին աշխատութեանց աջակցին ի հարկին, և նորա բացակայութեան ատեն վարել նոյն պաշտօնը։

ԿԱՐԳ ԽՕՍԻՑ

Յօդ. 11. Խերաքանչիւր ընկեր պարտի խօսք ուղել Ատենագրետն եւ նորա հաւանութեամբը խօսիլ։

Յօդ. 12. Ժողովոյն մէջ ընդմիջումներ արգիլուած են։

Յօդ. 13. Վիճաբանութեանց մէջ ատենաբանը փոխադարձ կարգաւ թեր և դէմ կը խօսին, այսինքն թեր խօսողի մը ետեէ ուրիշ թեր խօսողի մի խօսք չը արուիր։

- Յօդ. 14. Ատենաբանը պարտի խնդրէն չը շեղիլ։  
 Յօդ. 15. Վիճաբանութիւնն աւարտեալ է երբ խօսից  
 կարգն սպառի, Ատենապետը մնացեալ ատենաբանից  
 անուններն զեկուցանելով՝ ժողովոյն կամքը կը հարցնէ  
 և եղակացութիւնն յայսնի քուէի կը դրուի։  
 Յօդ. 16. Եթէ վիճաբանութեան փակման դէմ խօսք  
 ուզուի, Ատենապետը մէկ ատենեբանի խօսք կուտայ։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

- Յօդ. 17. Բնկերուհեաց կողմանէ առաջարկութիւնք  
 դրաւոր կը մատուցուի դիւանին, որն որ օրակարգն  
 սպառելէ յետոյ կը ներկայէ զանոնք Բնդհանուր ժո-  
 ղովոյ, և ըստ խնդրոյն և պարագային կամ առ Գոր-  
 ծագիր ժողովն կը յդէ կամ մանաւոր Յանձնաժողով  
 մի կազմել կ'առաջարկէ ի նախաքննութիւն և կամ ան-  
 միջազէս վիճաբանութեան կենթարկէ։

- Յօդ. 18. Բարեփոխութիւնք խմբագրեալ կը արուին  
 Դիւանին, առանց որոյ ժողովը քուէ չը տար ոչ մէկ  
 բարեփոխութեան։

- Յօդ. 19. Քուէարկութիւնը երկու կերպով կը կա-  
 տարուի. յայսնի և դաշնի։

- Յօդ. 20. Յայտնի քուէարկութիւնը կը լլայ ձեռամ-  
 բարձով, և եթէ շփոթութիւն տեղի ունենայ երունիս-  
 տով, և հակափորձ կը պահանջուի։

- Յօդ. 21. Դիւանին պարտքն է քուէներն համբել և  
 շփոթութեան դէմ հսկողութիւն ընել։

- Յօդ. 22. Գալանի քուէարկութիւնը կը կատարուի  
 հետեւալ կերպով. Ատենապետաց մին խրաբանչուր ըն-  
 կերուհւոյ կը բաժնէ քուէթուղթ մի և գրիչ մի, ու-

րիշ ատենադպիր մի քուէները կը հաւաքէ և մի առ մի  
 քուէտուփին մէջ կը ձգէ, ատենադպիրը քննչաց հսկո-  
 ղութեան ներքեւ քուէհամարը կը կատարեն և դիւանը  
 արդիւնքը կ'իմացնէ ժողովին։

Յօդ. 23. Քուէից հաւառարութիւն եղած ատեն ա-  
 տենապետին կրկին քուէն խնդիր կորոշէ։

ՊԱՏԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Յօդ. 24. Այն ընկերուհին՝ որ խնդրէն կը շեղի,  
 ժողովին բարեկարգութիւնը կը խանգալէ կամ անձնա-  
 կանութեան մի կը դպչի, աղդարարութիւն կը դունի,  
 յետոյ ի կարգ կը հրաւիրուի և յետոյ խօսերէ կը  
 դագրի։

Յօդ. 25. Բնկերութեանս կանոնաց դէմ վարուողը  
 Բնդհ. ժողովոյ որոշմամբ յերեսփոխանութենէ կը զրկուի։

Յօդ. 26. Թէ Բնդհանուր և թէ Գործադիր ժողովոյ  
 նիստերուն առանց գրաւոր աղդարարութեան երեք ան-  
 գամ յաջորդաբար բացակայ դանուող Բնկերուհին ինք-  
 նին հրաժարեալ կը համարուի։

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 27. Բնդհանուր ժողովոյ նիստն աւարտելէ  
 մինչև մէկ շաբաթ ետքը՝ դիւանը նորտ որոշումները  
 կը հազորդէ Գործադիր ժողովոյ։

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 28. Գործադիր ժողովոյ դիւանին պաշտօնը նոյն  
 է Բնդհանուր ժողովոյ դիւանին, միայն թէ Ատենա-

պետը փոխանակ անդամոց ցանկին՝ բաժանորդաց ցանկը պիտի ունենայ բաժիններու քանակութեան հետ նշանակուած :

Յօդ. 29. Գանձապետն պարտի համարակալէն ընդունած տոմսակներն ստորագրել ու ընդունած և յանձնած տոմսակներն ու դրամները զատ զատ տետրակներու մէջ արձանագրել, հաւաքչին յանձնել տոմսակներն և դրամներն ընդունիլ:

Յօդ. 30. Համարակալն պիտի ունենայ արձանագրութեան տետր մի, ուր պիտի նշանակուին բաժանորդաց անունները, բամենեգիններու քանակութիւնը, ելքն ու մուտքն :

Յօդ. 31. Ընկերութեանս մասնաճիւղերը կը կազմուին և անձերէ, Ատենապետ, Ատենագպիր, Գանձապետ և Համարակալ:

Յօդ. 32. Մայրաքաղաքիս մէջ գտնուած ճիւղերուն ատենապետը ընդհանուր ժողովն իւր մէջէն կ'ընարէ, իսկ միւս ընկերներն ատենապետէն կ'ընարուին և Ընդհանուր ժողովէն կը վաւերացուին :

Յօդ. 33. Մասնաճիւղերուն պաշտօնն է բաժանորդաց թիւն աւելիցնել ու փոյթ տանիլ, իրենց թաղին մէջ գտնուած բաժնեգիններն հաւաքել որոշեալ միջոցաւ մի, և եռամիան մի անդամ իրենց հաշիւն Ընդհանուր ժողովոյ ներկայել:

Յօդ. 34. Ուր որ յարմարութիւն չկայ մասնաճիւղ կազմելու, Ընկերութիւնը կրնայ ներկայացուցիչ մի ունենալ, որ այս ամեն գործողութիւնները կատարէ:

Յօդ. 35. Ընդհանուր ժողովոյ դիւանի պաշտօնը կը լրանայ տարեկան շրջանի փակման օրը որ է Ապրի-

իւ վերջը: Իսկ յաջորդինը կ'սկսի ժողովոյն բացման օրը որ է Մայիսի վերջը:

Յօդ. 37. Նախ կ'ընարուին Ընդհանուր ժողովոյ ատենապետք, յետոյ ատենագպիրը, և յետոյ Գործադիր ժողովոյ պաշտօնեայք կարգաւ քուէից բացարձակ առաւելութեամբ :

Յօդ. 38. Գործադիր ժողովը իւր պաշտօնէն կը դադրի նոր ըլջանի բացման օրը, և իւր յաջորդին ալ նոյն օրը կ'ընտրուի :

Յօդ. 39. Ընդհանուր ժողովոյ գիւանին պաշտօնէ դադրելէն յետոյ՝ բացման նատին հրաւելներն Գործադիր ժողովոյ կողմանէ կը զրկուին :

Յօդ. 40. Գործադիր ժողովոյ մէջէն եթէ Գանձապետը կամ համարակալը որ և է պատճառաւ մի հրաժարի, Ընդհանուր ժողովը Արտաքոյ կարգի նիստ ընել անմիջապէս նոր մի կ'ընարէ :

#### ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՔ

Յօդ. 41. Հաշուէքնիչ Յանձնաժողովոյ անդամք երեսփոխանուհիներէ գուրս երկու սեռէ ալ կրնան ընտրուիլ իսկ այլ մասնախմբերն ժողովն իւր մէջէն ալ կըրնայ ընարել:

#### ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԻՆ ԸՆԴ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Յօդ. 42. Ընկերութեանս վարժարանը Ազգ. Եկեղի. Վարչութեան վերին հսկողութեան ներքեւ են:

Յօդ. 43. Ընկերութեանս վարժարանաց պաշտօնեայք հարկ է Ազգ. Վարչութեան կողմանէ վկայագրեալ լինին:

Յօդ. 44. Ընկերութիւնս պարտի տարին մի անդամ իւր երեսփոխանուհեաց ցուցակն ու վարժարանաց վի-

Ճակին ու գործառնութեանց տեղեկագիրն ու հաշուեցուցակը ներկայել Աղդ. Կեդր. Վարչութեան:

Յօդ. 45. Ընկերութեանս թէ հիմնական և թէ ներքին կանոնագիրք երբ որ և է փոփոխութեան ենթարկին, հարկ է Աղդ. Կրթական վարչութեան վաւերացումն ստանան:

Յօդ. 46. Եթէ Ընկերութեանս անդամոց թիւն իւրինդէ. Ժողովոյ երեսփոխանուհեաց թիւէն նուազ ըլլայ, հիմնական կանոնագրի 28<sup>րդ</sup> յօդուածոյ արամագրութիւնք կը գործադրուին:

**Վաւերացեալ ի Կորական Տեսչութեան  
Աղդ. Կեդր. Վարչութեան**

**ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ՆՈՒԻԻՐԵԱԼ ԳՐԵԱՆՔ**

|                                                | Օրինակ |
|------------------------------------------------|--------|
| Թորոս աղբար                                    | 2      |
| Համով հոսով                                    | 2      |
| Վահեմ. Ասպետ Ա. Զունի                          |        |
| Համով հոսով                                    | 5      |
| Մեծ. Ա. Պիալէնեան                              |        |
| Ճաշակ Հայ մատենագրութեան                       | 5      |
| Մեծ. Յ. Ալլահիլէրսեան                          |        |
| Ռւլիս կամ Զէյթուն                              | 5      |
| Մեծ. Տիգրան Պօզանեան                           |        |
| Համառօտ թուարանութիւն                          | 8      |
| Ջեռամբ Մեծ. Մանուէլ Էֆէնի Խըրիւնեանի ( Բժիշկ ) |        |
| Մատենագարան Ժողովրդեան տարեկան ամբողջ          |        |
| Վահեմ. Օհան էֆէնտի Պաղտատեան . . . . .         | 5      |
| Մեծ. Աղայ Յ. Խզմիրեանց . . . . .               | 5      |
| » » Մ. Ասնասարեանց . . . . .                   | 2      |
| » » Հանի Տէվլիթ . . . . .                      | 5      |

# ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ՆՈՒԻՐԵԱԼ ԴՐԱՄԻՔ

|                                                                                      |         |
|--------------------------------------------------------------------------------------|---------|
| Հանդանակեալ Ստավազարի ազգայիններէ ձեռամի<br>Գեր. Ստեփան Շ. Վարդապետի եւ յանձնաբառու- |         |
| թեամբԳեր. Յովհաննէս Քահանաց Մկրեանի,                                                 |         |
| Տիկին Աղաւնի Թիւթէրեան նուիրեաց . . . . .                                            | 162     |
| Տիկին Մարիամ Տէր Նիկողայոսեան » . . . . .                                            | 108     |
| Տիկին Նազենիկ Մ. Ս. Տէրտէրեան » . . . . .                                            | 108     |
| Տիկին Նեկոտարինէ Մ. Պաղպաղեան » . . . . .                                            | 108     |
| Ձեռամի Վաեմ. Ասպետուհի Տիկին Ն. Ջունդի Օս-<br>մանեան կայսերական պանքայէ . . . . .    | 2160    |
| Հանդանակեալ Ձեռամի Օրիորդ Մարի Միւհէնտիս-<br>եանի նուիրատոմնէ հաւաքեալ . . . . .     | 155     |
| Հանդանակեալ ձեռամի Վաեմ. Ստեփան Վաշա-<br>լսնեանի Գահիրէի Ազգայիններէ . . . . .       | 2160    |
| Հանդանակեալ Պաթավիայի Ազգայիններէ . . . . .                                          | 977,75  |
| Նուէր Մեծ Շնորք Նաքաչեանի . . . . .                                                  | 108     |
| Ամբողջ զումար *                                                                      | 6026,75 |
| <hr/>                                                                                |         |
| * Տես Հաշուեցուցակ թիւ 1                                                             |         |
| Զանազաններէ նուէր . . . . .                                                          | 5751,75 |
| Նուիրատոմնէ հաւաքեալ . . . . .                                                       | 155     |
| <hr/>                                                                                |         |
| * Տես Հաշուեցուցակ թիւ 2                                                             |         |
| Զանազաններէ նուէր . . . . .                                                          | 2160    |
| Ամբողջ զումար                                                                        | 6026,75 |
| <hr/>                                                                                |         |

ԾԱՆՈԹ. — 1884ի արուած պարահանդիսին առթիւ եղած  
նուիրատութիւնը (գումար  $246 \frac{1}{2}$  դահեկան) ժամանակին  
լրագրաց միջոցաւ հրատարակուած եւ տեղեկագրոց վերջը  
դրուած թիւ 1 պարահանդէսի հաշուեցուցին հասոյթին կողմը  
հանակուած է:

## ՑՈՒՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

### ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Սկսեալ ի 17 Մայիս 1883 մինչ 23 Մայիս 1885

| 1. Կ. ՊՈԼՍՈՑ                                    |          | Համար | Տարբերակ |
|-------------------------------------------------|----------|-------|----------|
| Քանակ                                           | Վարչուած |       |          |
| Ա.մեն. S.S. Ներուս Մրազան Պատրիարք (հանգուցեալ) | 25       | 150   |          |
| » S. Ս. Մելիքիսետիկ Արեւապ. Մուրասեան (տաեկան), | 100      | 400   |          |
| Գեր. Խորեն Արեւապիսկոպոս Լուսինեան              | 9        | 216   |          |
| » Հմայեակ Եպիսկոպոս Դիմանսեան                   | 3        | 45    |          |
| » Գերգ Ծ. Վարդ. Ռուսուունեան                    | 10       | 40    |          |
| » Յովսէփ Ծ. » Այլվագեան                         | 6        | 138   |          |
| » Հայր Մատարիա Պետրոսեան                        | 5        | 120   |          |
| ՏԻԿԱՆՑՔ ԵՒ ՕՐԻՈՐԴՔ                              |          |       |          |
| Արքանամեան Վասիլիսէի                            | 2        | 108   |          |
| Աղամեան Աննա                                    | 2        | 48    |          |
| » Լուինեակ                                      | 1        | 21    |          |
| » Տիրուհի                                       | 4        | 24    |          |
| Արտանամեան Հ. Գ.                                | 1        | 3     |          |
| Ալարմեան Ելզիս                                  | 5        | 120   |          |
